

ԿԱՐԱՊԵՏ ՊԱՏՐԻԱՐՔ ՊԱԼԱՏԵՅԻ  
ՔԱՐՈԶ Ս. ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐԻ

Մեր եկեղեցու ԱՄՆ Արեւմտեան թեմի պահոցներում թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանի յանձնարարութեամբ ինչ-ինչ ձեռագրեր դիտարկելիս ի յայտ եկաւ Կ. Պոլսի պատրիարք Կարապետ Արք. Պալատեցու (1823-31 թթ.) քարոզների ժողովածուն՝ «Տարեկան Քարոզգիրք» անուանումով ամբողջական ձեռագիրը:

Ստեղծագործող մեր այս պատրիարքն իր 115 քարոզներում անդրադառնում է մեր եկեղեցու տօներին, դրանց խորհուրդներին, այն հոգածութեամբ, որ բոլոր մարդիկ կարիք ունեն քարոզների, հոգեւոր սնուցման, եւ Առաջաբանութեան մէջ ասում է. «Ասնհաւատք եւ հաւատացեալք մի օրինակ պէտս ունին քարոզութեան, անհաւատք՝ զի գալ մարթասցին ի լոյս աստուածգիտութեան, եւ հաւատացեալք՝ զմնալ զօրեացին հաստատութեամբ ի հաւատս» (Էջ Ա): Քարոզները գրուած են գրաբարով, կարծում ենք՝ մատչելի ու հասկանալի մեր հաւատացեալ հայորդիների համար:

Ներկայացնում ենք դեռեւս անտիպ Քարոզգրքի «Տօն Գեորգայ Զօրավարի» հատուածը՝ նուիրուած ամենից սիրելի սուրբերից մէկին՝ Ս. Գեորգ Զօրավարին, որի տօնը մեր եկեղեցին նշում է սեպտեմբերի 29-ին:

Նորայր Պօղոսեան

\* \* \*

«Զի որպէս առաւելա՛ն չարչարանքն Քրիստոսի» (Բ. Կորնթ. 1.5)

1. Սրբազան առաքելոյն Պօղոսի վճիռ է բաղդատական, զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս ի ձեռն Քրիստոսի առաւել լիցին մխիթարութիւն մեր: Եւ միթէ չարչարանք եւ մխիթարութիւն ունիցի՞ն ինչ յարմարութիւն ընդ միմեանս, կարի իսկ քաւ, քանզի չարչարանքն է մայր, եւ մխիթարութիւն է նորա դուստր սիրելի, նա աշխատութիւն եւ սա՛ վարձք, վասն առաջնոյն ասէ Տէր ցառաքեալն իւր. «Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք» (Յովհ. 16. 33): Եւ վասն երկոքին՝ «Ցնծացէ՛ք եւ ուրախ լերու՛ք, զի վարձք ձեր բազում են յերկինս» (Մատթ. 5.12): Քանզի գիտէր երանելին, զի թէ մարդ յաշխարհի աստ չարչարեցի վասն Քրիստոսի, ի հանդերձեալ աշխարհին հարկ է թագաւորեցի այնպիսին ընդ

Քրիստոսի, ըստ վճռոյ Սրբոյ Առաքելոյն, «զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի եւ մխիթարութիւն մեր»:

2. Զայս երկնաւոր մխիթարութիւն թեպէտ ի հանդերձելումն տայ Աստուած սիրելեաց, բայց եւ յայսմ աշխարհի ի ժամանակի պատերազմին եւս ո՛չ խնայէ ի նոցանէ: Գրեալ է՝ «Շրթունք Նորա որպէս շուշան, որք կաթեցուցանեն զմուռս» (Երգ. 5.11): Եւ թէ՛ «Մեղր եւ կաթն ի ներքոյ լեզուի քում» (Երգ. 4.11):

Արդ՝ զմուռսն օրինակ է նեղութեան, իսկ մեղրն եւ կաթն օրինակ է մխիթարութեան, եւ զի՞նչ միաբանութիւն իցէ երկոցունց սոցա ի մի բերան, քանզի չէ հեռի մխիթարութիւն ի նեղութենէ, որպէս շրթունքն ի լեզուէ:

Գրեալ է դարձեալ՝ «Ի պարտեզս ընկուզեաց իջի հայիլ յաղիւնս վտակացն, տեսանէ՛ ծաղկեա՛լ իցէ որթ, թէ ծաղկեա՛լ իցէ նոճ, ծաղկեա՛լ իցեն նոնենիք» (Երգ. 6.10): Զի՞նչ միաբանութիւն իցէ դառն ընկուզեաց ընդ քաղցր խաղողոյ եւ նոան, այլ աստ է խորհուրդ ընկուզի՝ արտաքուստ դառն եւ ի ներքուստ քաղցր, օրինակ է նեղութեան սրբոց, որ լի է երկնային մխիթարութեամբ, զոր տայ Աստուած սրբոց նաեւ ի նեղութեան անդ:

Յայտ է, թէ Նոյ ի տապանի իւրում էր ի մէջ մեծ նեղութեան, այլ Աստուած մխիթարեաց զնա ճիւղիւ ձիթենոյ, զոր եբեր աղանի: Իսրայելացիք էին յեզր Կարմիր ծովուն, զի կամ ի Կարմիր ծովն ունէին ընկղմիլ եւ կամ ի սուր փարաւօնի մաշիլ: Այլ Աստուած մխիթարեաց զնոսա ընդ ծով իբրեւ ընդ ծաղկաւետ դաշտ անցուցանելով զնոսա: ԶՅոր զանկեալ ի յետին տառապանս՝ մխիթարեաց խօսելով ընդ նմա, բայց ոչ ի լուսափայլ աթոռոյ, այլ ի նսեմ ամպոյ, որպէս թէ ասելով՝ «Սիրելի բարեկամ իմ, Յոր յերկրի վիրաւորեալ՝ մի՛ լիցի ինձ փառասիրութեամբ երեւիլ նմա, զի եւս երկարեցից»:

Զերիս մանկունս ի հնոցին մխիթարեաց՝ հուրն ի ցող փոխելով, առ այսոսիկ հայեցեալ ասէ մարգարէն՝ «Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ մխիթարութիւն քո ուրախ առնէր զիս» (Մաղմ. 93. 19):

3. Զորս ցայսվայր ասացաք, բացայայտ տեսանեմք ի քաջամարտիկ զինուորն Քրիստոսի ի Սուրբ Գեորգիոս, զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի նա, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել եղեւ մխիթարութիւն Նորա: Յառաջ քան զմարտնչիլ իւր ի հանդէս նահատակութեան, խորհուրդ ելանէ ընդ միտս իւր եւ ասէ ցանձն Գեորգիէ՝ «Ընդէ՞ր կաս դատարկս, ահա տէր կարդայ զքեզ եւ կոչէ ի հարսանիս

իւր, առագաստն բացեալ է, ընթրիք պատրաստեալ է, զի համիս դու, մու՛տ յառաջ քան զփակիլ դրանն»:

Եւ գոր խորհեցան, փութանակի ի գործ եղ, քանզի վաղվաղակի բաշխեաց զամենայն ինչս իւր աղքատաց, եւ իբր ըմբիշ արի ել յատեան Դիոկղետիանոսի եւ անվեհեր համարձակութեամբ ասաց. «Ահաւասիկ ես քրիստոնեայ եմ, ո՛վ թագաւոր»:

Եւ այսպէս սկիզբն արար մարտին, որ ընդ բելիարայ, եւ անցեալ ընդ գործ բազմաղիմի հնարից նորա՝ խորտակեաց զամենայն մեքենայսն եւ յաղթեաց նմա շնորհօքն Քրիստոսի եւ պսակեցաւ զանթառամ զպսակն:

Քաջ զինուոր էր Սուրբն Գեորգէոս, վասն որոյ զգեստաւորեցաւ ամենակերպ զինուրք: Նախ զգեցաւ զգրահն արդարութեան (Ելք. 6. 14), որով լինի մարդ ազատ ի նետից թշնամոյն:

Երկրորդ՝ եղեւ ագուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեամբ, որով իմացեալ լինին գնացք առաքինութեանց, յորոց վերայ զարմանալով կոչէ Եսայի՝ «Որպէս զի գեղեցիկ են ի վերայ լերանց ոտք ավետարանչի համբաւուն խաղաղութեան» (Եսայի 52. 7):

Երրորդ՝ էառ զվահան հաւատոյ, հաւատքն՝ ի վահան օրինակի, զի նովաւ պաշտպանիմք յամենայն մոլորութենէ:

Չորրորդ՝ էառ զսաղաւարտն փրկութեան, որ է յոյսն աներկբայ:

Հինգերորդ եւս՝ էառ զսուսեր Հոգւոյն, որ է Բանն Աստուծոյ: Եւ այսպէս զգեստաւորեալ՝ ամենակերպ զինուրք եմուտ ի մարտ ընդ բելիարայ, որ Դիոկղետիանոսն մարտնչէր ընդ յաղթող վկայիս, եւ որքան նա սաստկացուցանէր զմարտն, քաջամարտիկ զինուորն Քրիստոսի Սուրբ Գեորգէոս յաղթող գտանէր: Առաւելան չարչարանքն նորա, այլ առաւել եւս եղեւ մխիթարութիւն նորա յԱստուծոյ:

4. Նախ հրամայէ Դիոկղետիանոս կախել զերանելին զփայտէ ի հրապարկի անդ եւ զեղարդեամբ հարկանել զորովայն նորա, զի ի վայր թափիցին աղիքն. ահա՛ չարչարանք առաւել: Բայց զեղարդ իբրեւ զկապար ի յետ կոյս ծալեցաւ. ահա՛ մխիթարութիւն առաւել:

Երկրորդ՝ հրամայէ զոտսն երանելւոյն ի կոճիղս պնդել չարաչար, եւ մի ծագոյն վեմ մի ի վերայ կրծիցն դնել: Այլ նորա շնորհօքն Քրիստոսի ի մնալն կենդանի՝ մոլեգնեալ թագաւորն հրամայէ խորհրդով գործակցաց իւրոց պատրաստել անիւ սրալից, եւ անդր

ընկենուլ տալ զերանելին, զի չարաչար կտրատեսցի ամենայն մարմին նորա. ահա՛ չարչարանք առաւել: Բայց անդէն անդ հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ ելոյծ զնա ի տանջարանէն եւ ողջացուցեալ զմարմին նորա ասէ ցնա. «Ուրա՛խ լեր, Գեորգէոս, ահա մխիթարութիւն առաւել»:

Երրորդ՝ հրամայէ արկանել զերանելին ի գուբ հրոյ եւ թողլով անդ զերիս տիւս եւ զերիս զիշերս: Այլ իբրեւ զգուբն յետ երից աւուրց գտանի երանելին ողջանդամ շնորհօքն Քրիստոսի. ահա՛ չարչարանք եւ մխիթարութիւն առաւել:

Չորրորդ՝ հրամայէ անօրէնն Դիոկղէտիանոս առնել կօշիկս երկաթիս, որ ունիցի ի ներքուստ սուրս ուղղորդս եւ սաստիկ ջեռուցեալ զնա ի հուրն եւ ապա ունելեօք յոտն ագուցանել երանելոյն եւ շրջեցուցանել. ահա՛ չարչարանք անտանելի: Բայց եւ առ ժամն յերկնից գայր առ նա ձայն, որ ասէր՝ «Քաջալերեա՛ց, Գեորգէոս, զի ես ընդ քեզ եմ ի փրկել զքեզ». ահա՛ մխիթարութիւն զերաստիճան: Թող զայս եւս դառն կսկիծ չարչարանս, որով ընկալաւ զկատարումն ի Ռէմլէ քաղաքի (որ մերձ է ի Յոպպէ):

5. Գեորգ անուն յայտ է, թէ երկրագործ կամ մշակ թարգմանի, եւ արդարեւ ըստ անուանն իւրոյ մշակ եղել առաքինութեանց Սուրբն Գեորգէոս: Մշակք սերմանէն տրտմութեամբ, բայց ապա հաւաքէն ցնծութեամբ: Սուրբ Գեորգէոս ի մէջ աշխարհի սերմանեաց անտանելի չարչարանօք, զի ի հանդերձեալ աշխարհինա հերկեսցէ անպայման ցնծութեամբ: Արդիւնաւորութեամբ այս երկնաւոր մշակիս ոչ միայն իքնեան եղել, այլեւ ամենայն հաւատացելոց, քանզի սերմանէ արդարութեամբ ի սիրտս հաւատացելոց, բայց քան զլեզուս վարդապետաց հօրագոյն եւս քարոզին: Վարդապետք բազում անգամ յաղագս առաքինութեան խօսեցեալ առ բազումն՝ երբեմն շահին եւ ոչինչ, իսկ մարտիրոսք յարդեանց անտի ձայն արձակեալ՝ յոյժ առաւել հակեցուցանէն զմիտս եւ շարժին զկամս հաւատացելոց ի գործ:

Իւրաքանչիւր սուրբ մարտիրոսք յաւուր տօնի իւրում վարդապետէ հանդիսացելոցն ի տօնախմբութիւն, եւ ի՞նչ այսօր Սուրբն Գեորգէոս մեզ վարդապետէ: Վարդապետէ՛ չմնա՛լ անգործ յագարակի եկեղեցոյ, քանզի ի գործ ասէ կոչեաց զձեզ Աստուած: Եթէ մինչ ի վախճան կենաց ձերոց արհասջիք, ի նոյն վարկս ընկալջիք յԱստուծոյ, եւ որքան առաւել լիցի ջանք ձեր, այնքան առաւել լինիցին վարկք թերեւս: Վճիռ առաքելական, որ յիս ճշմարտեցաւ, ճշմարտասցին եւ ի ձեզ, այն է՝ «զի որպէս առաւելան չարչարանքն

Քրիստոսի ի մեզ, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի եւ մխիթարութիւն մեր» (Բ. Կորնթ. 1.5): Ահա վարդապետութիւն գլխովին արդեամբ:

Եւ որպէս վարդապետութեամբ, նոյնպէս եւ բարեխօսութեամբ արդիւնաւորէ մեզ այս երկնաւոր մշակս, քանզի բարեխօսութեամբ սորա անհամար սքանչելիք եղեն եւ լիցին յամենայն տեղիս ի վերայ հիւանդաց եւ ախտացելոց եւ վտանգելոց, որ եւ է գլուխ ամենայն սքանչելագործ եւ երագահաս սուրբ զօրավարաց: Ապա յաւուր հրաշալի տօնախմբութեանս մաղթեսցուք ի Տեանէ տալ զպէտս ամենեցուն կարեաց մաղթանօք եւ բարեխօսութեամբ Սրբոյն մեծի Գեորգայ զօրավարի. ամէն: